II

Բուն տաճարը պարսպի մէջ, շինուած է 1215 թուին, ինչպէս երեւում է արեւմտեան ճակատին, դրան գլխին՝ բարձր կամարի վերայ եղած արձանագրութիւնից, ուրեմն Պռոշեան տիրապետութիւնից առաջ (պատկ. 138)։

Ի ժամանակս Զաքարիայի եւ Իւանէի նորին հարազատի եւ որդոց նոցին Շահնշահի եւ Աւագին եւ յառաջնորդութեա. Բարսղի միայնաւորի եւ աշխատութիւ. եղբարցս շինեցաւ կաթողիկէս մեծափառ :ՈԿԲ:

Եկեղեցու շինութեան շրջանին է պատկանում և այն գեղեցիկ խաչարձանը, որ կանգնած են նոյն դրան աջ կողմից (հայոցի)։

ՈԿԲ (1213) թ. Ա.Ճ ողորմեա Տիմոթին եւ Մխիթարա յաւրինուղաս (ընդ գծուածը պարզ չէ, կասկածելի) արձանագրութեամբ (տես պատկ. 6)(*)։

Հաւանօրէն հայր Բարսղի յաջորդն էր, գուցէ եւ տաճարի շինութեան վերջին աշխատանքներին մասնակից Սարկաւագ վարդապետը իւր միաբաններով, որի արձանագրութիւնը այնքան պատուաւոր տեղ է գրաւում արեւմտեան դրան կամարակալ քարի ճակատին, առաջին տողը համընթաց աղեղնաձեւ զարդաքանդակին, իսկ երկրորդը նորա տակը՝ հորիզոնական ուղղութեամբ.

Զմահացեալս մեղաւք զՍարկաւագ։ Վդս համաւրէն միա բանաւքս յիշեցէք ի Քս. (պատկ. 138)։

Մխիթարեան կարդում է «զսարկաւագ Վարդանս», որ սխալ է եւ արձանագրութեան բովանդակութեան անհամապատասխան. միաբանութեան գլուխը վարդապետ էր, անշուշտ, մանաւանդ, արդէն հռչակ ստացած միաբանութեան (**)։

Եկեղեցու շինութեան մասնակից են և բազմաթիւ անձնաւորութիւններ. այսպէս ոմն Ասխաթան շինել է աջակողմեան աւանդատունը (Ցաւել. Ա. 69), միւս յարկը շինել է ոմն Նախավկա (Ցաւել. Ա. 70). ձախ դասի արեւելեան պատի արձանագրութեան համեմատ՝ դրսից՝ Աբրահամ ոմն թոռն Աբրահամու եւ քեռորդի Մարկոս վարդապետի շինել է այդ խորանը (Ցաւել. Ա. 71, պատկ. 139). անշուշտ, Մարկոս վարդապետը միաբաններին եւ տեղացիներին ծանօթ անձնաւորութիւն է, գուցէ և վանքի առաջնորդը կամ գլխաւորներից մէկը հայր Բարսղից առաջ եւ հայր Գրիգորից յետոյ։ Սորա տակի աւանդատունը շինել է ոմն Պետրոս, նուիրելով նաեւ Երեւանում գտնուած իւր այգին (Ցաւել. Ա. 72, պատկ. 139)։ Աջ կողմի յետին դասի խուցը շինել են Գրիգոր և Լուսոտ (երեւի, ամուսիններ), տալով մի եւ նոյն ժամանակ 120 դահեկան (Ցաւել. Ա. 73)։ Նոյն անկիւնի դրսի կողմից, բայց տաճարի մաս, աւանդատունը շինել է Գրիգորի որդի Մխիթարը (Ցաւել. Ա. 74)։ Ձախ դասի յետին վերին աւանդատունը շինել է Վարդ երէց՝ որդի Աւագ երիցոյն (Ցաւել. Ա. 75) արձանագրութեան տեղից դատելով, ներքեւինը Վարհամ իւր Ռուզուքան կնոջ հետ (Ցաւել. Ա. 76). Ստեփանոս ոմն, որ սնուել է Այրիվանքում սալել է տալիս կաթուղիկէն եւ երկու խորան. այս արձանագրութիւնը գտնւում է ժամատան ձախ դասի սեան վերայ, և կարծում ենք ծագմամբ կաթուղիկէի եւ ժամատան շինութեան ժամանակներից (Ցաւել. Ա. 77)։

Տաճարի շինութեան տարիներից են անկասկած Սմբատ թագաւորազնի թոռն և Վաղթանկի որդի Հասանի և նորա կնոջ Ռուզուքանի արձանագրութիւնը, որ գտնւում է ափսիդի հարաւային պատին. մենք տեսանք, որ սրանց յիշատակին որդին Կեչառուաց վանքում ՈԿԹ թուին շինել է Ս. Ցարութիւն եկեղեցին. այս արձանագրութիւնն, ուրեմն, գրուած է այդ թուականից առաջ (Ցաւել. Ա. 78). Նա վանքին նուիրել է մի աւետարան և Տաւնական և ստացել տարին տաս ժամ։

Նոյն ժամանակից է եւ Տղայ Գրիգորի, տարաբաղդաբար եղծուած, արձանագրութիւնը, գրուած ափսիդի հիւսիսային պատին, Պռոշի մեծ արձանագրութեան տակ (Ցաւել. Ա. 79). Տղայ Գրիգորը Խաչենի իշխաններից էր, Աւագի տան վերակացուն (*)։ Սորանն է, հաւանօրէն, նաեւ արեւելեան պատին՝ դրսից՝ մի արձանագրութիւն, որից միայն «Ես Գրիգոր Խաչենեցի | . . . տունս . . զիմ խաչն եւ | փոխարէն տվին :Ա: աւր ժամ ի տրին» հազիւ կարողացայ կարդալ (Ցաւել. Ա. 100)։ Շինութեան ժամանակից է Կարապետի արձանագրութիւնը, Ասխաթանի արձանագրութեան տակ (Ցաւել. Ա. 80), որ կրկնուած է նաև արեւմտեան կողմից, կրկնայարկ ա-

(*) Խաչարձանը ԺԴ. դարի նման, գեղեցիկ գործերից մէկն է, յաճախ կրկնուած շրջանակի երկրաչափական ձեւերի պէսպիսութիւններով և խաչի դաշտի զարդարանքներով. բայց հաղուագիւտ է պատկերաքանդակներով։ Մէջ տեղը բարձր աթոռի վերայ Ամենակալն է նստած երկու կողմից օրհնող ձեռքերով. նրա աջից իւղաբեր Մագդաղենացու հանդիպումն է պարտիզում յարուցեալին (Յովհ. Ի. 15), իսկ ձախից մկրտութիւնը։ Մխիթարեան կարծում է Սամարացի կինն է, որ սափորով ջուր է մատուցանում Յիսուսին։ Պատկերը տես նաև Ուվարովայի Mat. bo Archäolgie XIII. Tabl. V. 10։

(**) Գոչ Մխիթարի աշակերտներից մէկը կոչւում էր Սարկաւագ, հին Գետիկի վանահայրը (Դանա. Թիֆլ. եր. 197). նոյնանուն մի վարդապետ ևս յիշւում է Հաղարծնի արձանագրութիւնների մէջ (Զալ. եր. 131)։ Սարկաւագ յատուկ անուն է այստեղ և ոչ պաշտօն կամ կոչում։

(*) Գանձ. Ղուկ. հրատ., եր. 242։